

ԲԻՉՉՈՒԱ.

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՒ

Ա

Երկրորդ օրը առաւօտանց կանուխ Ալեքսանդրիա քաղաքը տօնական զարդերու մէջ էր . մէկէն անհուն բազմութիւն լեցուած էր՝ տերևներով լեցուն ու պճնազարդ դրօշներով ծածկեալ փողոցներուն մէջ . բազմութիւնն՝ այն հասարակ տնէն ուր էին Նարոլէոն ու Յովսէփինէ՝ դէպ 'ի արուարձանին ծայրը կանգնուած յաղթակած կամարը կ'երթար, ուսկից պիտի անցնէին Մարէնկոյի անուանի դաշտերն երթալու տեսնելու համար :

Ալեքսանդրիայէն Մարէնկոյ տանող ճամբուն վրայ նոյնպէս էր ժողովրդեան խառնիճաղանճը, աղաղակն ու փողերու ձայնը :

Ոչ երբեք Լորետոյի Ս. Աստուածածնայ պանդխտութեանը կամ չոռվմայ յորելեան հանդիսի մը համար այնչափ ամբոխ մարդկանց խոնուած էին՝ որշափ որ այս պատերազմական ծխաշունչ դաշտը դիտելու համար ամեն կողմանէ կը թափէին : Վասն զի զլսաւր հանդէսն հոն էր . Նարոլէոն կայսրը կեղծեալ պատերազմի մը ներկայ պիտի գտնուէր 'ի յիշատակ հինգ տարի առաջ հոն ըրած յաղթովթեանը, քանի որ գեռ առաջին հիւպատոս էր : Ճամբուն երկայնութեամբը սեղաններ, ստոլներ դրուած են . ուտել խմել ու բաց օդուն մէջ կատակերգովթիւն ձևացընել, և ինչուան քարոզ տալ՝ առհասարակ է . յանկարծ ընդ մէջ թէատրոնին ու գինետան այլ և այլ ամնպիոններ կը տեսնուին : Կրօնաւորներ ամբոխին մէջ խառնուելով, կամ մէկդի

ճամբուն եզերքը քաշուելով և գոհ շրլով սոսկ օրհնել անցորդները՝ կը յորդորեն որ հանդարտին ու ժումկաւ լութիւն ունենան, և փղոսկրէ պղտիկ Աստուածածնի պատկերներ ու օրհնած վարդարաններ կը ծախսեն իրենց :

Մարէնկոյ զեղին միակ ձիգ ճամբուն վրայ ամէն տուն պանդոկի փոխուեր է ու բազմամբոխ շարժման ու շփոթութեան մէջ կ'երևան : Ամէն պատուհաններէ գնողներուն փորձութիւնն ու ախորդը շարժելու համար ծխեփեաց խողենի ապուխտներ, երշիկներ, շամփուրով խորոված մոստ կարմրակաքաւներ, լորամարգիներ ու շատ մ'ալ ձուազեղներ ու շպարեղէններ : Խտաւացիք, Գաղղիացիք, զինուրական, քաղաքացի կը մոնեն կ'ելլեն, մէկզմէկ կը հրեն . դդմաճներու քաքարներու բոկեղներու ու պլակունտերու կոյտեր ծախողներու ձեռքին մէջ կը սպառին :

Նեղ ու մութ սանդուղներու վրայ ելլողներն ու իշնողներն երկու գիծ ձևացած զիրար կը հրեն կը հրմշտըկեն . ու մանք պարէննին ձեռքերնին՝ որպէս զի մօտականներնուն յափշտակել չտան՝ թերենին զլսերնէն վեր կը բարձրացընեն, ու մթուն մէջ աւելի երկայն ու ճարտար ձեռք մը կը կորզէ համազամ խորտիկը, հոգելից կսկուծ մ'եղեր է, կամ թուզ նարինջ ապուխտ խատուտիկ լրամարզի, կամ կեղևստ ըլիթ . կամ պտուկի մէջ կարմրցուցած գերազանց մսի կտոր մը, պտուկն ալ մէջինն ալ մէկտեղ յափշտակելով : Առջի քայլէն ինչուան վերջինը խեղկատակութիւնք, կանչուըռիւն ու երկայն բարակ քրքիջներ կը լսուին . ներս մտնող զողն առած մասին վրայ գոհ ետ կը դառնայ . իսկ վար իշնողն ու գողցընել տրողը կը ստիպուի կերակրոյ համար նորէններս մտնելու . ու խուռն ամբոխը յանկարծական մակրնթացովթեամբ ու տեղատութեամբ խախտուելով ու շրջաններ ընելու բոնադատուելով, զուարթութեամբ երդմունքներ ընելով, օդոյն մէջ բռնցի հարուածներ տալով մաս մը փողոց կը թափի, մաս մ'ալ դահլիճ-

ներուն մէջ՝ ուր ծխողները կրօնաւուրաց բարի խրատները մոռցած՝ զլուխ ճաթեցներու աղաղակաւ կ'երգեն :

Խորտկալից սեղաններու և կոչնականներով լեցուն բազմոցներու հետ խուցէ խուց սպասաւոր կանայք և մանրիկ աղախիններ կը շատնային . ոմանք գունաւոր ղենջակներով, մաղերնին փոշելից, ու պղտիկ դանակ մը ձեռքերնին, որ հիմա ալ նոյնպէս իրենց զիսաւոր զարդն է . ոմանք ալ կարծ ներքնամեկնոցով, մաղերնին հիւսած, բոկոտն ու վզերնին ճակատնին ականջնին ոսկեզօծ ակունքներով զարդարած :

Ճամբուն գեղին տան փողոցի այս աշխոյժ տեսարաններուն, այս խուլ շնկոցներուն երգերուն գոռում գոչումին խնտալներուն և խօսակցութեանց՝ դաւաթներու պնակներու ձայներուն ուրիշ աղաղակներ պիտի յաջորդենքիչ ատենէն :

Ժամէ մը թնդանօթն այս գեղին վը-րայ պիտի որոտայ, յայտնի է թէ դրեթէ անվնաս կերպով, միայն ապակիները ջաղջախելով . ճամբան ալ պատերազմի եռանգեամբ բորբքած զօրաց ձայներովը պիտի հնչէ, ու տներն ամենն ալ անգնտակ հրացանաց ծխոյն ներքեւ պիտի աներևութեանան :

Վայ ան ատեն եթէ պարէններն աղէկ պաշտպանուած չըլլան . վայ նաեւ բոկոտն մանրիկ աղախնոյն, վասն զի ձևացեալ պատերազմը երրեմն բուն պատերազմի գեղծմունքն ունի :

Մասնաւորապէս կը ջանան որ տեսարանները նման ըլլան . Մարէնկոյի դաշտին մէջ պատրաստուածը շատ պերճ ու վասպուուն էր :

Արդէն չքեղ գահոյք մը բարձրացած էր այն չքնաղ բլուրներէն մէկուն վրայ՝ որովք երկիրը գմբեթարդէ, ու եռագոյն դրօշակներ չորս բոլորը կը ծածանին . արդէն ամեն տեսակ զինուորութեանց և նշանազգեստի զնդերն սկսեր էին լեցուիլ իրենց տեղերը բլուներու . վողն հնչեց, ձիւաւորներն ալ եկան . թմբուկն ամբողջ գետինը կը թնդացնէր, խակ ձիերն ու թնդանօթա-

ձիգ կառքերը զողցես կը դլրդէին ու կը խանգարէին զայն : Աջակից սալարներն իրենց փողփողեալ տարազովը կ'անցնին ու կը դառնան, հազար ու մէկ ուղղութեամբ կը բաժնուին . դրօշակներն օդուն մէջ կը ծաւալիին կը ճօճին, և միանգամայն նոյն ատեն գարգմանակներու, ցցուններու, երփն երփն ու եռագոյն փետուրներու շարժուն ծովը կրոհակածն կը տատանէր : խակ արևը՝ նարուէոնի հանդէսներուն մեծ հրաւիրակը, կայսերական չքեղութեան այն լուսալիր փայլը, կրակի պէս կը շողողացընէր ոսկեղէն երիզները, թըն դանօթոց պղինձները, զիսարկները, լանջապաններն և վախտուն հազար սուխններն, որոնցմով խոզանացեալ էր դաշտը :

Հետաքրքրաց բազմութիւնը տեսնելով որ զինուորները սկսան փութով իրենց շարժմունքները, մէկէն ետ ետ քաշուելով՝ նահանջի անբաւ բոլորակ մը կը ձևացնեն, նման Ռվիկանու ալեաց որոնց վրայ յանկարծ սոսկալի կրհակ մը կու գայ կը ճնշէ : բանի մը ձիւաւորներ ալ գէպ 'ի յետամնաց ամբոխը վազելով շուտ մը զմիջօցը կը սրբէին :

Գեղն ամայացաւ, զուարիթ վրանները ծալլուեցան, սեղանները վերցուեցան, երգերն ու աղաղակները լուեցին . մարզիկ կերակուրնին կամ խաղերնին կէս թողուցած, կանայք ալ ձիոց խրինջիւնէն ու սուրերու շողիւնէն սարսափած՝ տղաքնին ետենէն բերելով՝ գաշտին ամեն կողմանէ կը վազէին :

Եթէ մէկը գեռ շտարտղնած ու իւրաքանչիւր զրօշներու տակ եղած ժամանակ ամբողջ բանակին շարքին վրայ աչք մը տար, զօրաց կեցուածքէն՝ վայրագ բնաւորութենէն կամ երեսնուն վրայ եղած լոին տիւրութենէն դիւրաւ կրնար հասկընալ թէ անոնք են որ լան մարաջախտն իր հրամաններովը կան.խաւ իբրև յաղթեալ կամ ապագայ յաղթող որոշած էր : ինքն խակ հոն էր բազմաթիւ սպաններով ու կը ճանչնար այն տեղն ուր քաջութեամբ նահատա.

կեր էր երբեմն և իւրաքանչիւրոց ընելիք մասը բաժներ էր :

Հոն պիափ կրկնուին 1800 տարւոյն յունիսի 14ին եղած ճակատամարտին գլխաւոր շարժմանքը, բայց ջանալով եղած վրիպակները զանց ընել. վասն զի կեզծ սազմայարդարութիւն մ'է, թնդանօթի հարուածներով յանկարծական բանաստեղծութիւն մը՝ որ նոր կայսեր ու թագաւորին կը պատրաստուէր :

Գնդերը կը կազմուին կը կարգաւորուին և ըստ սալարներուն հրամանաց կը գալարին, Ալեքսանդրիոյ ճամրուն վրայ սրաձայն ներդաշնակութիւններ լսուելուն պէս : Տարտամ մոնչիւն մը կը թանձրանայ ու անթիւ բազմութեան մէջ կը տարածուի, որ Դանարոյի, Պորմիտայի, Որպայի գետափանց կամ Դորդունէի լերանցամէջներուն վրայ պատրապարուած էին, ու այն ընդարձակ կը ըկէսին երերուն ու եռանդուն գօտին կը ձևացնէին :

Յանկարծ մարդակուուոյն թմբուկը կը հնչէ . ամեն կողմանէ կեցցէներ ու պոռալու ձայներ կը բարձրանան ալեձե փոշոյն մէջէն . սուրերը լուսով կը փայլին, հրացանները կը շտկուին, և միաձոյլ շարժմամբ կը հնչեն և ուժը ձիով լծուած փառաւոր կառք մը՝ իտալիոյ ու Գաղղիոյ զէնքերով դրոշմուած՝ ինչուան իրենց գահուն աստրոտը կը բերէ զՅովսէփինէ և զՆաբոլէն, որ իտալիոյ ամեն երեսփոխանաց և Լուքքայի, Ճենովայի, Ֆիորէնցայի, Հռովմայ ու Բրուսիոյ գետափանաց մեծարանքն ընդունելէն վերջը, հանգիստ կենալէն նեղուելով, ձիուն վրայ կը ցատքէ ու մէկէն ամբողջ դաշտը կրակով ու ծխով կը բորբքի :

Ասոնք էին առոյգ աշխարհակալին խաղերը, պատերազմը պարապութեանը զբօսանքն էր, պատերազմը իրեն բարձր վախճանին հանելու համար . այս բանս պէտք էր իրեն պէս կրակոտ սրտի մը՝ որ տիրապետելու համար ծընած էր, և աշխարհակալութեամբ էր միայն որ ինքինքն անդործ կեցած չէր սեպէր :

Յովսէփինէ միայն մնացեր էր գահուն վրայ և գրեթէ զարհուրած էր այն տեսարանէն . կայսերմէ որոշուած սպայ մը այն մեծամեծ շարժմանց վախճանն ու տեղափոխութեանց գաղտնիքն իրեն կը բացատրէր :

Ցըցուցեր էր Մելաս աւստրիացւոյն Գաղղիացիքը Մարէնկոյ գեղէն վանտելն ու գլխակոր Բիէդրա Պուռնա և Քասդէլ Զէրիելոյ վախցընելը, և Պոնաբարդէի յանկարծ զյաղթականը կարկամեցնելը 900 հիւպատական թիկնապահներովը : Իսկ հիմա բոլոր ուշագրութիւնը մարտին որոշողական մէկ վայրկենին վրայ ամփոփել կուտայ . հասարակապետականք ետ կը քաշուին, բայց Ռըզէ Դորդոնէի ճամբուն վրայ կ'երևայ . Հունգարաց զարհուրելի առաջքն Զաքին հրամանատարութեամբը՝ կուռ վառեալ զէնքերով իրեն դէմ կը վազեն :

Սպան գեռ խօսելու հետ էր երբ Յովսէփինէ թեթև շփոթութիւն մը զգաց իրեն մօտ . պատճառն հարցուց և իմացաւ թէ մատաղ աղջիկ մը անխոհեմութեամբ զօրաց պատճէներուն մէջէն անցնելով՝ յարձակման ժամանակ ձիաւորներէն կամ կառքէ մը բիւր անդամ ջախջախուելու վտանգաւ, յուզմունք կը պատճառէր յամառութեամբ պնդելով պահապանաց ու նաֆշտաց դէմ թէ կայսեր կ'ուզէ երթալ :

Իր շարունակուի:

Ճարտար Գողուրիւն .

Գեղացիին մէկը ծախու այծ մը ունենալով կը հեծնայ իր իշուն վրայ, ու ճամբայ կ'ելլէ որ տանի իրեն այծը մօտիկ քաղաք մը, մեծ յուսով որ կարելի եղածին չափ աղէկ գնով ծախէ կենդանին : Եւ որպէս զի ճամբան հանգիստ ըլլայ, այծուն վիզը զանգակ մը կ'անցունէ ու կը թողու որ կենդանին իրետեւէն գայ : Իրեք ճարտար գող, ճամ-